

ՍԱՅԵԱԹ – ՆՈՎԱՅԻՆ

Հաղա՛ր տարին ջուրի նրման պիտի սահի սաղիդ լարէն
Ու ժանդոտած սուրի նրման հիննան՝ պատիր ճառերն ամէն,
Քու հողիդ երգն արեւոտ հունտի նրման ծըլի դալար,
Ու բողբոջի վարդի պէս վառ՝ սիրող սրտիդ հուրին մէջէն...

Առանց վարդին՝ դարուններու պսակը թերի՛ պիտի մընար,,
Սոխակներու դեղն ու դեղզեղ, նուազը թերի՛ պիտի մընար,
Ինչպէս նախկին Աշխարհն Հայոց՝ առա՛նց իր լեռ Արարատին՝
Առանց քեզի՝ Լեզին ազնիւ աղղը թերի՛ պիտի մընար....:

Ո՛վ որ լրսէ քեզ մէկ անգամ, սիրտը փուռի պէս կը վառի,
Իր հողի ծառի ճիւղին՝ սէրը նուռի պէս կը թառի...
— Կոմիտասի փեանքի ճամբուն սաղըդ եղաւ լոյս ու բուրբառ —
Քեզ ունկնդրողն աչուդ կ'ըլլայ կամ յուզումէն կ'ոգեվարի՛....:

Մեր պանդուխտի տրտում հողին երգիդ խաղով ճաճանչացա՛ւ,
Այս անապատը դաղթանխտ ձեռքիդ սաղով կանանչացա՛ւ,
Դուն մերն էիր ու մեր լեզուով կը խօսէիր սիրամորձոք,
Երբ քեզ լրսեց՝ Գաղղիացի՛ն իսկ ձեռքը սրտին դըրած՝ լացա՛ւ...

Սայեա՛թ Նովա, խօսքըդ հըլօր իրական է բողբոջի պէս,
Արեւելքի շրթներուն վրայ տիրական է աղօթքի՛ պէս...
Դուն որջին մէջ գաղաններն իսկ երգիդ ուժով մարդացընող,
Այդ ո՛ր հրէն է՝ ձայնըդ լրսեց, բայց քեզ այրե՛ց Մողոքի պէս....:

Մեր նոր Երկիրն ա՛լ չ'ունենար քեզ մորթոտող հին թշնամին,
Ա՛խ, գիտնայի՛ր, թէ ան ի՛նչպէս սողուն օձ մ'է դարձած յետին...
Մինչ քու ցեղիդ որդիքն ազնիւ նըւաճելով աստղերն անգամ՝
Պիտի տանին քու Սաղըդ վե՛ր, ու երգեն քեզ մէջը լուսնի՛ն....:

ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ

ԴԱՐՁԵԱԿ ՔԵՁԻ ՀԵՏ

ԹԱԳՈՒՀԻ ՀՈՎԻԻԵԱՆ

Մեծ մայրիկս էր, անոյշ ու ժիր, —
Հարիւրամեայ թաղուհի, —
Սուրբ էր այնքան, որ անունն իր
Դըրած էի՝ Սրբուհի:

Կը պատմէր ինձ առտու — իրկուն,
Միջադիւղէն մեր փոքրիկ,
Ապա, կ'ըսէր, ո՛ւր էիր դուն,
Այսքան տարի, իմ թոռնիկ:

Կեանքին տըխուր ճամբուն վըրայ,
Ձայն կու տայի զլխահակ,
Սեւ աշխարհէն դարձած հիմա
Կ'ըզձամ հանգչել շուքիդ տակ: —

Մեծ մայրիկս էր, անոյշ ու ժիր, —
Հարիւրամեայ թաղուհի, —
Սուրբ էր այնքան, որ անունն իր
Դըրած էի՝ Սրբուհի:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

Ժընեւ, 16. 8. 1959